ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵ՞Ն ԹՈՒՐՔԵՐԸ ՍՈՒՄԵՐՆԵՐԻ ԵՎ ՀԵԹԵՐԻ ՀԵՏ

Ե. Հ. ՏՈԼԲԱԳՅԱՆ

Վերջին տասնամյակների ընթացքում թուրք պատմագրությունը տարածում է հակագիտական և հակապատմական տեսություններ, որոնք կոչված են «հիմնավորելու» այն տեսակետը, թե թուրքերը Փոքր Ասիայում (Անատոլիա) հաստատված են եղել մ. թ. ա. III հազարամյակում։ Թուրք հնագետ Շ. Ա. Կանսուն «հայտնաբերում է» «թուրքական պալեոլիթյան մշակույթ» և «թուրքական նեոլիթյան մշակույթ» այն Փոքր Ասիայում, որտեղ թուրք ցեղն առաջին անգամ ոտք է դրել մեր թվագրության XI—XIII դարերում միայն։

Հետապնդելով քաղաքական ու ռասիստական որոշակի նպատակներ, թուրք պատմագրությունը նենգափոխում է գիտությանը վաղուց հայտնի փաստերը։ Այդ գործում արտակարգ եռանդ են հանգես բերում Է'սատ Ուրասը իր „Tarıhte Ermeniler ve Ermenı meselesi“ գրքով և Ֆահրեդդին Կըրզի օղլին իր „Kars tarıhı“ աշխատությունով։

«Թուրքական հանրապետության կազմակերպումից հետո,— գրում է սովետական պատմաբան Դ. Եվգենևը,— թուրք պատմագրությունը թուրքերի էթնոգենեզի հարցերում չխուսափեց չհիմնավորված էթնոգենետիկական կոնցեպցիաների առաջքաշումից, չարդարացված հիպոթեզներից։ ...Քեմալիստները խնգիր դրեցին գիտականորեն հիմնավորել թուրքերի իրավունքը Փոքր Ասիայի տերիտորիայի նկատմամբ, մասնավորապես ապացուցել անատոլիական թուրքերի «բնաշխարհիկ» լինելը։ Այս կոնցեպցիան գրվեց ազգային հարցի և թուրքերի էթնոգենեզի վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հիմքում»[1]։

«Աթաթուրքի մահից հետո և համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին,— գրում է նույն հեղինակը,— ...թուրք հետադիմական և ագրեսիվորեն տրամադրված շրջաններն սկսեցին համառորեն պնդել ու ազդել կառավարության վրա, որ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը կողմնորոշվի դեպի ֆաշիստական Գերմանիան։ Աշխուժացան պանթուրքիզմի և գերմանական իմպերիալիզմի կապերը։ Ստեղծվեցին կապեր ֆաշիզմի հետ։ Պանթուրքիստները սկսեցին պրոպագանդա թուրք լեզվով խոսող ժողովուրդների տերիտորիաները նվաճելու մասին»[2]։ *1941 թ. հուլիսին հրատարակված «Մեծ Թուրքիայի» քարտեզը ընդգրկում էր սովետական Անդրկովկասը և Միջին Ասիան*[3]։

---

[1] Д. Е. Евгеньев, Вопросы этногенеза в турецкой исторической литературе, (в сборнике „Этнические процессы и состав населения в странах Передней Азии“, М.—Л., 1963, *էջ 71, 73*)։

[2] *Նույն տեղում, էջ 82։*

[3] *Նույն տեղում։*

Երևան են գալիս «պատմական» նոր աշխատություններ, «որոնց հիմնական առանձնահատկությունն է հանդիսանում այն, որ թուրքալեզու ժողովուրդները ներկայացվում են որպես մի բուրդ. բարձունքում կանգնած են թուրքերը, որպես ուղն ու ծուծը ամբողջ թուրքալեզու ընտանիքի։ Պատմության վերաբերմամբ այդպիսի հայացքը պետք էր պանթուրքիստներին նրա համար, որպեսզի հիմնավորեն թուրքախոս ժողովուրդների միությունը Թուրքիայի ղեկավարությամբ»[4]։ 1952 թ. վերահրատարակվեց Գյոքալպի «Պանթուրքիզմի հիմունքները» դիրքը, որը 1959 թ. լույս տեսավ ԱՄՆ-ում և Անգլիայում անգլերեն լեզվով։ Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում է սատ Ուրասի և Ֆահրեդդին Կըրպի օղլիի գրքերը։

Պանթուրքիզմի այդ բոլոր նկրտումները հիմնավորելու համար թուրք պատմաբանները ձգնում են ապացուցել, որ Մերձավոր Արևելքի ու Փոքր Ասիայի հնագույն բնակիչներ շումերները (սումերները), էլամացիները և խուրրիները IV հազարամյակում Միջին Ասիայից գաղթած պրոտոթուրքեր են։ Ուրարտուի պետության կազմավորման մեջ մեծ տեղ հատկացնելով խուրրիներին, նրանք փորձում են տիրանալ նաև Ուրարտուին ու նրա ստեղծած մշակույթին։ Իրենց հակապատմական դրույթները հիմնավորելու համար նրանք հենվում են, օրինակ, ֆրանսիացի գիտնական Մեշենի վրա, որը գրում է. «Շատ վաղ ժամանակներից, այսինքն մ. թ. 5000 տարի առաջ, սումերներն իջնելով Կենտրոնական Ասիայի սարահարթերից, որոնք նույնպես պատկանում էին ուրալո-ալթայական ցեղին, հաստատվում են Եփրատ և Տիգրիս գետերի հովիտներում։ Ուրում, Տելլոյում և Լագաշում վերջերս հայտնաբերված հուշարձանները մեր առաջ պարզում են նրանց (սումերների — Ե. Տ.) ֆիզիկական կերպարանքը՝ ամուր կազմվածք, լայն ու լիքը գծեր, ուղիղ և նուրբ քիթ, մաղ ու մորուք ածիլված. սրանք ուշագրավ նմանություն ունեն այն տիպին, որին բավականաչափ հաճախ կարելի է հանդիպել Վերին Թուրքեստանի ժողովուրդների մեջ։ Քարե կամ կավե տախտակների վրա փորագրված բազմաթիվ արձանագրությունները հեշտացնում են վերծանել ու վերակառուցել նրանց լեզուն»[5]։ Իր «հայտնագործությանը» հավաստիության գույն տալու նպատակով Մեշենը վկայության է կանչում մի այլ ֆրանսիացու՝ Ստեֆան Ռոնարին։ Այս վերջինը գրում է. «Այդ լեզուն (այսինքն սումերերենը — Ե. Տ.) հատկանշող շատ գծեր նկատելի են դեռևս արդի թուրքերի լեզվի մեջ հազարավոր տարիներից հետո. մոտավորապես երկու հազար բառեր հաստատում են նրանց սկզբնական ծագումը»[6]։ Այնուհետև Մեշենը ավելացնում է. «Երկու հազար տարի անց (սումերների՝ Կենտրոնական Ասիայի սարահարթերից իջնելուց հետո — Ե. Տ.), այսինքն մ. թ. ա. 3000-ական թթ., եկել էին հեթիթները, որոնք էլ հանդիսացան առաջին թուրքերը և Անատոլիայում հողը մշակողները»[7]։

Արդ, այս բոլորից առաջանում են հետևյալ հարցերը.

1) Ճի՞շտ է, որ սումերները մ. թ. 5000 տարի առաջ իջել են Կենտրոնական Ասիայի սարահարթերից,

2) իրո՞ք սումերները պատկանում են ուրալո-ալթայական ցեղին,

---

[4] Նույն տեղում, էջ, 83։

[5] Benoist-Méchin, Mustapha Kémal ou la mort d'un Empire, Paris, 1954, էջ 34—35։

[6] Stephan Ronart, La Turquie d'Aujourd'hui, Paris, 1937, էջ 17։

[7] Benoist-Méchin, նշվ. աշխ., էջ 34—35։

3) իսկապե՞ս սումերներից 2000 տարի հետո՝ մ. թ. ա. 3000-ական թթ. նույն Կենտրոնական Ասիայի սարահարթերից եկել են հեթիթները՝ հանդիսանալով Անատոլիայի «առաջին թուրքերը», «հողը մշակողները» և Խաթթուշաշ մայրաքաղաքի հիմնադիրները։

4) ճի՞շտ է, որ «նախաթուրքեր» են Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղային միությունները ու հասարակությունները։

Հենվելով ոչ միայն զարգացած արևելագիտության և հեթագիտության, այլև ժամանակակից մարդաբանական, լեզվագիտական և հնագիտական տվյալների վրա, այս բոլոր հարցերին հնարավոր է տալ միայն բացասական պատասխան։

* * *

Հնագիտական և պատմական լուրջ ուսումնասիրությունները ապացուցում են, որ սումերները չեն եկել Կենտրոնական Ասիայի սարահարթերից մ. թ. 5000 տարի առաջ։ Սումերները Միջագետքի ստորին մասում հայտնվում են IV—III հազարամյակների միջև ընկած ժամանակաշրջանում կամ ամենավաղը՝ IV հազարամյակի սկզբներին։

Հայկական լեռնաշխարհի նախաբնիկների պատմությունն ուսումնասիրող հեղինակավոր գիտնական Ջեյմս Բրեստդը գրում է. «Երբ Նեղոսի շրջանից սառցային անցնելիս ջրերը, կամ աստվածաշնչային ջրերը քաշվեցին Միջագետքից, մ. թ. 4000 տարի առաջ Հայկական լեռնաշխարհից իջնելով Միջագետքի արդավանդ դաշտերում տեղավորվեցին կլորգլուխ ալպյան ցեղեր։ Այս ժողովուրդը պատմության մեջ ծանոթ է սումերներ անունով»[8]։

«Ժամանակակից մարդաբաններից ոմանց տեսությամբ,— գրում է ամերիկացի ականավոր հնագետ Ռոլանդ Դիքսոնը,— սումերները Հայկական բարձրավանդակի լեռնալանջերից իջնելով՝ Տիգրիս և Եփրատ գետերի հովտում հաստատվեցին և ստեղծեցին մի մեծ քաղաքակրթություն»[9]։

Պրոֆ. Վ. Ավդիևը գրում է. «Միջագետքում մ. թ. ա. IV հազարամյակում սկիզբ են առել պրիմիտիվ, նահապետական տնային ստրկության վրա հիմնված հնագույն դասակարգային պետությունները»[10]։

Սակայն, եթե սումերները IV հազարամյակի սկզբներին են իջել Միջագետքի արդավանդ դաշտերը, դրանից չի հետևում, որ նրանք հենց անմիջապես հաստատվել են Միջագետքի այն ծայրագույն հարավում, որը Սումեր (Շումեր) անունով է հայտնի։ Այդ հաստատվելու պրոցեսը տեղի է ունեցել հետդհետե։

Միջագետքի հարավում, Սումեր երկրում, մարդիկ սկսում են բնակություն հաստատել միայն Նեղոսի շրջանում. այդ են ապացուցում անգլիացի հնագետների Հարավային Միջագետքում կատարած պեղումները[11]։

Հնագետները պարզել են, որ այն ժամանակ, երբ Միջագետքի դաշտավայրը (հատկապես նրա հարավային մարզերը) դեռևս ծածկված էին ծովով,

---

[8] J. H. Breasted, Ancient Times—The history of the early world, Boston, 1935, էջ 141—142։ Տե՛ս նաև Wallbank and Taylor, Civilization. Past and present. vol. I, էջ 49—51։

[9] Rolland Dixon, The racial history of man, New York, 1923, էջ 583։

[10] Վ. Ի. Ավդիև, Հին Արևելքի պատմություն, Երևան, 1947, էջ 75։

[11] Տե՛ս Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. Ա, Երևան, 1931, էջ 68 և 333։

Հայկական լեռնաշխարհը մարդաբնակ էր. մարդկությունը այստեղից իջավ Միջագետքի դաշտավայրը, տարածվելով հետզհետե ցամաքող երկրամասի վրա։ Հայտնի է, որ Պարսից ծոցը հին ժամանակներում ձգվում էր մինչև Սիրիական անապատը։ Եփրատ գետն այդ շրջանում Պարսից ծոցն էր թափվում ժամանակակից Հիթ քաղաքի մոտակայքում, իսկ Տիգրիսը ուներ իր առանձին գետաբերանը՝ մոտավորապես Մոսուլի շրջանում։ Նշանակում է, որ Բաբելոնը այդ ժամանակ դեռևս գոյություն չուներ։ Ըստ Կոնտենոյի հաշվումների[12], մ. թ. ա. III հազարամյակի ընթացքում Պարսից ծոցի ջրերը դեպի հարավ են նահանջել 200 կմ, իսկ էլեոտի կարծիքով, միայն վերջին 5000 տարում ծովը նահանջել է 250 կմ։ «Մ. թ. 3000 տարի առաջ Եփրատն ու Տիգրիսը երկու առանձին գետաբերաններով էին թափվում Պարսից ծոցը, չկային Շաթ-էլ-Արաբը և սումերական առաջին բնակավայրերը»,— վկայում է Կոնտենոն[14]։

Սումերներին հայտնի էր պղնձի գործածությունը։ Այդ մասին ժակ դը Մորգանը գրում է. «Լեռներից իջնելով՝ ժողովուրդները եկան գրավելու ջրից ազատվող Քաղդեաստանը։ Նրանք իրենց հետ բերում էին պղինձը։ Սակայն որտեղի՞ց էին գալիս այդ մարդիկ։ Անշուշտ, ո՛չ Իրանի սարահարթից, քանի որ Իրանի բարձրավանդակը չորրորդական շրջանում դեռ անմարդաբնակ էր, և ոչ էլ Անդրկովկասից։ Այդ մարդիկ կարող էին իջնել միմիայն Հայաստանի լեռներից և բարձրադիր Ասորեստանից»[15]։

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի ականավոր հնագետ-արևելագետը ակնարկություն անգամ չունի Կենտրոնական Ասիայի մասին։ Ընդհակառակը, նա գրում է. «Պարսկաստանում և Հայաստանում կատարված հնագիտական հետազոտություններով հաստատվեց, որ Թուրանական (այսինքն՝ ուրալո-ալթայական ցեղերի — Ե. Տ.) գաղթ այդ երկրների վրայով դեպի Պարսկական ծոցը տեղի չի ունեցել»[16]։ Եվ այս վճռական խոսքը ամենափայլուն հերքումն է Թուրք պատմագրության և Մեշենի զարգացրած «տեսությունների», որոնց համաձայն սումերները եկել են Կենտրոնական Ասիայի սարահարթերից։

* * *

Այժմ քննարկենք այն հարցը, թե իրո՞ք սումերները պատկանում են ուրալո-ալթայական ցեղին։

Մարդաբանական բոլոր քննությունների արդյունքները ցույց են տվել, որ սումերները պատկանում են առաջավորասիական այն մեծ ժողովրդախմբերին, որին հնագետ-մարդաբանները անվանում են «ասիանական», «փոքրասիական», «հեթիթյան» կամ «արմենոիդ»։ Դրանք Առաջավոր Ասիայի, մասնավորապես Հայկական լեռնաշխարհի բնիկ ժողովուրդներն են, որոնք իրենց մշակույթով և մարդաբանական տիպով կազմում էին մի ամբողջականություն։ Դա անհերքելիորեն ապացուցված է առաջավորասիական մշակույթների ընդ-

---

[12] Տե՛ս Dr. G. Contenau, Les civilisations du Proche-Orient. Paris. 1946, էջ 11։

[13] Տե՛ս Henry ware Eliot, Excavations in Mesopotamia, Cambridge, Mass., 1950, Tabl. 23.

[14] Dr. G. Contenau, Նշվ. աշխ., էջ 11։

[15] J. de. Morgan, L'Humanité préhistorique, Paris, 1924, էջ 249։

[16] J. de Morgan, Les premières civilisations, Paris, 1909, էջ 181։

հանրությամբ՝ ըստ հնագիտական տվյալների[17]։ Մինչդեռ ուրալո-ալթայական ժողովուրդները պատկանում են «մոնղոլոիդ» մարդաբանական տիպին, որի մեջ մտնում են Չինաստանի և Կենտրոնական ու Հյուսիսային Ասիայի բնիկները։

Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթությունը ստեղծող ասիանականների մարդաբանական տիպը առաջին անգամ ուսումնասիրող գերմանացի հայտնի գիտնական Ֆելիքս ֆոն Լուշանը գրում է. «Առաջավոր Ասիայի սկզբնական ազգաբնակությունը բաղկացած էր բրյունետներից (թխադեմներից) և աչքի էր ընկնում կարճագանգությամբ ու մեծ քթով։ Այդ ազգաբնակությունը հարմար է անվանել արմենոիդական։ Սրանք իրենց մարդաբանական տիպը ժառանգել են հաթերից և զարմանալի կերպով միատարր պահպանել են մինչև մեր օրերը՝ հազարավոր տարիների ընթացքում, չնայած որ միշտ շրջապատված են եղել այլազգի, շատ անգամ թշնամի տարբերով»[18]։ Ուսումնասիրությունները պարզել են, որ արմենոիդ տիպը տարածված է եղել ամբողջ Միջագետքում, սկսած նրա հարավային մասից մինչև Տիգրիսի ու Եփրատի ակունքները և ապա՝ դեպի Փոքր Ասիայի արևմտյան մասերն ու Իրանի խորքերը[19]։

Մարդաբանական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սումերները նույնպես պատկանում են ասիանական կամ արմենոիդ մարդաբանական տիպին, որը բնորոշ է ոչ միայն Սումերում, որտեղ հուշարձանները նրանց պատկերում են կարճագանգ և մեծ քթով, այլև խուրրիների երկրում[20]։

Կոնտենոն, որը մեծ հեղինակություն է հեթադիտության բնագավառում, հենվելով ոչ միայն իր, այլև շատ ականավոր արևելագետների ու մարդաբանների ուսումնասիրությունների վրա, դեռևս 1927 թ. իր մի աշխատության մեջ ժողովուրդների ասիանական (արմենոիդ) խմբի մեջ է դասում ոչ միայն սումերներին, այլև այսօրվա հայերին[21]։ Իր մեկ այլ աշխատության մեջ նա կարճագանգ ասիանականների շարքին է դասում նաև հեթիթներին ու խուրրի-միտանիներին[22]։ Իբրև ընդհանուր եզրակացություն, իր այս գրքում նա գրում է. «Հին Արևմտյան Ասիայի լեզվաքննական բոլոր ուսումնասիրությունները մեզ բերում են այն եզրակացության, թե այս երկրների վաղագույն քաղաքակրթությունը արգասիք է ասիանական լեզուներով խոսող ժողովուրդների, որոնցից հնագույնն են սումերները»[23]։

Ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը գրում է. «Նախքան Բաբելոնիայում սեմիտների հայտնվելը, որոնք այնտեղ եկել էին Արաբիայից, Միջագետքը, Հայաստանը և Փոքր Ասիան բնակեցված էին ասիանական ցեղով, որի մի ճյուղը՝ սումերները Բաբելոնիայում, խուրրիները (սուբարիները, ու-

---

17 Տե՛ս Dr. G. Contenau, La civilisation des Hittites et Hurrites du Mitanni, Paris, 1948, էջ 53, նաև Արշակ Ալպոյաճյան, Պատմական անցյալը Սոփաց աշխարհի, «Խարբերդ», խմբ. Վ. Հայկ., Ն. 3., 1959, էջ 186։

18 Ф. Лушан, Народы, расы и языки, 1925, էջ 142—143։

19 Տե՛ս Խ. Սամվելյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 99։

20 Տե՛ս Dr. G. Contenau, La civilisation des Hittites et des Hurrites du Mitanni, էջ 29։

21 Տե՛ս Dr. G. Contenau, Les Tablettes de Kerkouk et les origines de la civilisation assyrienne, Paris, 1927, էջ 11—12։

22 Տե՛ս նույնի Manuel d'Archeologie Orientale, 1927—1947, հատ. 1, էջ 193։

23 Նույն տեղում։

բարտացիները — Ն. Տ.)՝ Հյուսիսային Միջագետքում և Հարավային Հայաստանում, իսկ հեթիթները՝ Փոքր Ասիայի արևելքում կազմում էին մի շղթայի երեք գլխավոր օղակները»[24]։

Ամփոփելով վերոշարադրյալը, հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Սումերները չեն եկել Կենտրոնական Ասիայի սարահարթերից մ. թ. 5000 տարի առաջ։

2. Նրանք ոչ մի առնչություն չունեն ուրալո-ալթայական ժողովուրդների հետ, որոնք պատկանում են մարդաբանական մոնղոլոիդ տիպին։

3. Արմենոիդների սկզբնական բնակավայրը եղել է Հայկական բարձրավանդակը, որտեղից նրանք հետագայում տարածվել են դեպի Միջագետք և Արևմտյան Փոքր Ասիա։

4. Հայկական լեռնաշխարհի նախաբնիկ կարճագանգ այդ ցեղերի հետնորդները մինչև այժմ էլ բնակվում են Հայկական լեռնաշխարհում։ Սեմիտները և հնդեվրոպականները, որոնց Ֆ. Լուշանը, Ռ. Վիրխովը և ուրիշներ համարում են եկվոր, դրսեկ տարրեր, հետագայում միախառնվեցին կարճագլուխ այս ժողովուրդներին[25], էական ներգործություն չունենալով տեղաբնիկների մարդաբանական տիպի վրա[26]։

* * *

Թուրքերը ցեղային ոչ մի առնչություն չունեն նաև հեթերի (հեթիթների) հետ։

Հեթագիտության հիմնադիր Բ. Հրոզնին, վերծանելով հեթական սեպագիր և հիերոգլիֆ արձանագրությունները, գիտական աշխարհի առաջ բացահայտեց նախահեթական ժամանակաշրջանը, այսինքն բնաշխարհիկ խաթերին կամ հաթերին[27]։

«Հեթերը,— գրում է Ռենե Գրուսեն,— որոնք բնակվում էին Փոքր Ասիայի բարձրավանդակի վրա՝ Կապադովկիայում. խառնուրդ ժողովուրդ էին, հիմնականում ասիանական, այսինքն՝ բնիկ փոքրասիական, որի վրա մ. թ. ա. 2000 թ. նստել է հնդեվրոպական նվաճողների (նեսիտների — Ն. Տ.) արիստոկրատական շերտը»[28]։

Խաթերը կամ խաթիները ունեին իրենց սեփական ասիանիկ լեզուն՝ «խաթիլի» կամ «հաթիլի»։ Այդ լեզվով, իբր առաձների հավաքածո, 18 նմուշներ են գտնվել Բողազքյոյում, որը խաթերի մայրաքաղաքն էր (Խաթթուշաշ)։ Նրանց

---

[24] Nicolas Adontz, Histoire d'Arménie, Les origines du Xe siècle au VIe siècle (Avant J. C.), Paris, 1946, էջ 374—375։

[25] Տե՛ս Dr. G. Contenau, La civilisation..., էջ 29 30։

[26] Այս տեսակետը պաշտպանում են Բ. Հրոզնին, Ն. Մարտիրոսյանը, Ա. Խաչատրյանը. Կոնտընոն և ուրիշներ։

[27] Տե՛ս Hrozny, Rapport préliminaire sur les fouilles tchécoslovaques du Kultepé, 1925, „Syria", VIII (1927).

[28] Acad. René Grousset, Histoire de l'Arménie, dés origines a 1071, Paris, 1947, էջ 44։ Հեթիթների մասին տե՛ս նաև Man, Past and Present, by A. H. Keane, Cambridge University Press, 1899, էջ 499—501։ The Land of the Hittites, by J. Garstang, New York, E. P. Dutton and C°, 1910, էջ 451։ Von P. Yensen. Hittites and Armenians. Preface pp. XXI—XXII vols, pp. 1—6, Strasburg, verlag von Karl J. Trubner, 1889, էջ 255։

մասին Կոնտենոն գրում է. «Այդ խաթերը կամ հաթերը իսկական հեթիթներն էին՝ ասիանականներ (արմենոիդներ — Ե. Տ.), իսկ նեսիտները, որոնք այդ ժողովրդին հեթիթներ անվան տակ հռչակավոր էին դարձրել, ոչ մի իրավունք չունեին այդ անունը կրելու։ Նրանց պետք է անվանենք «նախահեթեր»՝ բնաշխարհիկներին իրենց նվաճող նեսիտ-հնդեվրոպականներից տարբերելու համար»[29]։

Այս նույն հարցերի կապակցությամբ Հրոզնին գրում է. «Հնդեվրոպացի նեսիտները շուրջ 2000 թ. մ. թ. ա. Փոքր Ասիա ներխուժեցին։ Նրանք այնտեղ գտան տեղական մի ժողովուրդ, որին նվաճեցին, բայց որի հետ ավելի ուշ խառնվեցին։ ...«Արմենոիդ» տիպը, որ մասնավորապես նկարագրված է մարդաբան Ֆոն Լուշանի կողմից, անկասկած, ամենից առաջ Փոքր Ասիայի այն բնածին ժողովուրդն է, որ հեթական արձանագրություններում chattite-խաթիթ է անվանված»[30]։

Այսպիսով, խաթի-հեթիթները ասիանականներ կամ արմենոիդներ են, ինչպես որ առաջավորասիական և առանձնապես Հայկական լեռնաշխարհի հնագույն բնիկ ազգաբնակությունը, որի մասն էին կազմում հեթերը կամ հաթերը, սուբարիները կամ խուրրիները, հայասցիները և խալդ-ուրարտները։ Նրանք ոչ մի առնչություն չունեն թուրանական կամ ուրալո-ալթայական ցեղերի հետ։

Հայկական լեռնաշխարհի համարյուն և ցեղակից բնաշխարհիկ այս ժողովուրդներից յուրաքանչյուրը, ինչպես գրում է ֆրանսիացի ակադեմիկոս Ռ. Գրոսսեն, մ. թ. ա. IV—III հազարամյակներում բարձրավանդակի զանազան մարզերում ստեղծել էր քաղաքական առանձին հզոր միավորումներ։ «Ինչպես որ հեթերը և խուրրի-միտանիները (նաև հայասցիները — Ե. Տ.) համարյուն ցեղակիցներ էին պատմական ժամանակաշրջանի նախորդող դարաշրջանում, սակայն գոյության պայքարը նրանց պատերազմների էր մղում միմյանց դեմ»[31] պայքար, որը մղվում էր Հայկական լեռնաշխարհը քաղաքականապես միավորելու համար։ Հեթական պետության ամենանշանավոր վեհապետ Շուպպիլիլիումային հաջողվեց իր դերիշխանությանը ենթարկել ոչ միայն Հայասա-Ռդին, այլև Խուրրի-Միտանին։ Սակայն մ. թ. ա. XII դարի վերջին տասնամյակում կործանվեց հեթական հզոր պետությունը՝ «ծովածողովուրդների» ահավոր արշավանքի և ներքին մի շարք պատճառների հետևանքով, իսկ 1350 թ. (մ. թ. ա.) արդեն կործանվել էր Խուրրի-Միտանի պետությունը, որի կազմի մեջ մտնող ցեղախմբերը կազմեցին Նաիրյան ցեղերի դաշնակցությունը և ապա՝ Ուրարտական պետությունը։

Հայասան անվնաս մնաց «ծովածողովուրդների» արշավանքի ավերածություններից։ Երբ Ուրարտուն իր թևերը տարածեց Հայկական լեռնաշխարհի վրա, Հայասան կամ դրա մի մեծ մասը չէր մտել Ուրարտուի տիրապետության ոլորտը և դարեր շարունակ ներքին զարգացման պրոցես ապրեց, հետագայում իր անունը տալով Հայաստան երկրին։

---

[29] Dr. G. Contenau, La civilisation des Hittites et des Hurrites du Mitanni, էջ 24։

[30] Hrozny, Le Hittite, Archiv Orientalni, vol. III, № 2, 1931, էջ 272—295։

[31] Dr. G. Contenau, La civilisation des Hittites et des Mitanniens, Paris, 1934, էջ 12։

Թե՛ տերիտորիալ-վարչական տեսակետից, թե՛ էթնիկապես և թե՛ մշակույթով հայերը եղան սուբարիների (խուրրիների), նախահեթերի, հայասցիների, նաիրցիների և ուրարտացիների ժառանգորդները։

Ուստի զուր է Ֆահրեդդին Կրրզի օղլիների զայրույթը այն անաչառ գիտնականների դեմ, որոնք «հանդգնել են» Թուրքերին եկվոր համարել և Հայաստանը ճանաչել են իբրև հայերի բնօրրան։

Այսօր չկա պատմությանը քիչ թե շատ տեղյակ մեկը, որ չգիտենա, որ Թուրքական ցեղերի հայրենիքն են հանդիսացել Կասպից ծովից արևելք՝ Արալ լճի շուրջը տարածվող անապատներն ու տափաստանները, ինչպես և Ամու-Դարիա և Սիր-Դարիա գետերի ստորին հովիտները։ Դեռևս VII—X դարերի ընթացքում Թուրքական տարբեր ցեղերը արաբների ազդեցության շնորհիվ ընդունեցին իսլամական կրոնը։ Այնուհետև Թուրքական ցեղերից սելջուկ-Թուրքերն ու օղուզ-Թուրքերը սկսեցին դուրս գալ իրենց բնօրրաններից և դեպի արևմուտք արշավել։ Այդ արշավանքների ու ներխուժումների ժամանակ նրանք իրենց ձիերի սմբակների տակ ոչնչացնում էին նվաճված վայրերի դարավոր քաղաքակրթությունները, հրի ու սրի մատնում քաղաքներն ու գյուղերը, ծխացող ավերակույտեր Թողնելով ետևում։ XI դարից սկսած նրանք հետզհետե տարածվեցին ոչ միայն Հայկական բարձրավանդակի վրա, հիմնելով Շեդադյան, Շահարմենների, Խլաթի, Դանիշմանների և Օրդուխյան էմիրությունները, այլև Փոքր Ասիայում ստեղծեցին Գոնիայի կամ Իկոնիայի սուլթանությունը, որը ձգվում էր Կաբինից մինչև Մարմարա։ Իկոնիայի սուլթանության քայքայման հետևանքով Էրթողրուլի որդին՝ Օսմանը, միացրեց բոլոր Թուրքական իշխանությունները, հիմնելով օսմանյան պետությունը և 1453 թ. գրավելով Կ. Պոլիսը։

Այսպիսով, բոլոր փաստերը աներկբայորեն վկայում են, որ Թուրքերը ոչ մի առնչություն չունեն ո՛չ սումերների, ո՛չ հեթերի և ո՛չ էլ Հայկական լեռնաշխարհի որևէ նախաբնիկ ժողովրդի հետ։